ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«9» սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-94/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ալֆա» ՍՊԸ-ի 26.08.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 26.08.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Ալֆա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2016թ. կայացած նիստում թիվ 4 արձանագրությամբ հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել ընթացակարգի առաջին

տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ալֆա» ՍՊԸ-ին, իսկ գնահատող հանձնաժողովի 18.08.2016թ թիվ 2 որոշմամբ «Արտֆլոր» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշում է կայացվել:

Հանձնաժողովի արձանագրությունը և որոշումները կայացվել են օրենքի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից: Այսպես՝ խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին, 2-րդ կետերը, 8-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը:

Մրցույթի հրավերը հրապարակելու ամսաթվի դրությամբ գործող ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշման 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ **<u>ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում</u>** հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Տվյալ գնման ծավալաթերթ-նախահաշվով առավելագույն գինը նախատեսված է եղել 68,621,234 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ «Ալֆա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է պայմանագիրը կատարել 50,530,853 ՀՀ դրամով (ներառյալ ԱԱՀ): Առաջարկված գնի և առավելագույն գնի 75 տոկոսի տարբերությունը կազմել է ընդամենը 935,073 ՀՀ դրամ: «Ալֆա» ՍՊԸ-ից պահանջվել է ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, ինչը ժամանակին կատարվել է: Հիմնավորման մեջ հստակ առանձնացվել են նյութական ծախսերը և աշխատանքային ծախսերը, որից պարզ երևում է, որ ցածր գնային առաջարկը պայմանավորված է սեփական էժան բանվորական աշխատուժ (քանդման աշխատանքների համար) ունենալով և սեփական անհրաժեշտ տեխնիկական միջոցներ ունենալով: Իսկ նյութական ծախսով նախատեսվել է առավելագույնս որակյալ նյութեր ձեռք բերել, ինչը հանձնաժողովի կողմից անտեսվել է:

ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշման 47-րդ կետի 3-րդ ենթակետը ՀՀ կառավարության N 700-Ն որոշմամբ 07.07.2016թ-ին ուժը կորցրել է: Փաստորեն ՀՀ

գործադիրը գործնականում համոզվել է, որ տվյալ կետը պարունակել է կոռուպցիոն մեծ ռիսկ և բազմաթիվ չարաշահումների, սուբյեկտիվ մոտեցումների տեղիք է տվել և մեծ վնաս է հասցրել ՀՀ պետական բյուջեին, ինչի վառ ապացույցն է գնահատող հանձնաժողովի գործողությունները:

Ընկերությունը գտնում է, որ հանձնաժողովի գործողությունները ոչ իրավաչափ են, քանի որ հանձնաժողովը չի ներկայացրել մերժման օբյեկտիվ հիմքեր և ցուցաբերելով սուբյեկտիվ մոտեցում, վնաս է հասցրել ՀՀ պետական բյուջեին 774,674 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտի դահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Ալֆա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 26.07.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումը:

2. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

3. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 02.09.2016թ. ժամը 14:45-ին ԳԲԽ-94/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացուցիչը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը և հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի գործողությունները ոչ իրավաչափ են, քանի որ հանձնաժողովը չի ներկայացրել իրենց ընկերության հայտի մերժման օբյեկտիվ հիմքեր: Իրենց առաջարկած գնի և առավելագույն գնի 75 տոսկոսի տարբերությունը կազմել է ընդամենը 935073 ՀՀ դրամ: Ընկերության կողմից ներկայացված հիմնավորման մեջ հստակ նշվել են ցածր գնային առաջարկ ներկայացնելու հիմքերը՝ սեփական էժան բանվորական աշխատուժ, սեփական անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այլն:

<u>2. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.09.2016թ. թիվ 02/23/4737-16 գրությամբ, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, 8-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 3-րդ ենթակետը, 47-րդ կետի 3-րդ ենթակետը, Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգն իրականացվել է ՀՀ գնումների մասին օրենսդրությանը համապատասխան: 2016 թվականի հուլիսի 19-ի գնահատող հանձնաժողովը N 2 որոշմամբ ծանուցել է «Ալֆա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնային առաջարկի հիմնավորումներ և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: «Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և գնային առաջարկի հիմնավորումներ: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը: Գնի հիմնավորումը մերժվել է. Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտի դահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 68,613,950 հազար ՀՀ դրամ, «Ալֆա» ՍՊԸ-ն առաջարկել է 50,530,853 հազար ՀՀ դրամ (73.6%), այսինքն՝ ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարը նվազում է 26.4%-ով: Օրինակ՝ քանդման աշխատանքների 1-ին տողով սահմանված՝ 3-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատրով կողալիցքով տողի նախահաշվային արժեքը կազմում է 740 ՀՀ դրամ, վճարման ենթակա գումարը՝ 544.97 ՀՀ դրամ, իսկ հիմնավորմամբ ներկայացված արժեքը կազմում է 650 ՀՀ դրամ:

«Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի հիմնավորման մեջ նշվել է, որ ընկերությունն ունի քարի մշակման արտադրամաս, սակայն աշխատանքների իրականացման մեջ քարով իրականացվող աշխատանքները կազմում են ընդհանուր աշխատանքների 3%-ը:

Վերոգրյալի հիման վրա գործնականում անիրատեսական է դառնում նման ծավալի աշխատանքների պատշաճ որակով իրականացումն առաջարկվող գնով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 02.09.2016թ. ժամը 14:45-ին ԳԲԽ-94/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչն առարկել է բողոքի դեմ և հայտնել է,

որ ընթացակարգն իրականացվել է ՀՀ գնումների մասին օրենսդրությանը համապատասխան, գնահատող հանձնաժողովը մերժել է «Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ցածր գնային առաջարկի հիմնավորումները, քանի որ հնարավոր չէ այդքան ցածր գնով և բավարար որակով կատարել հրավերով պահանջվող աշխատանքները, բացի այդ ընկերության կողմից ներկայացված գնի հիմնավորման մեջ նշված քարի մշակման արտադրամաս ունենալու փաստը չի կարող էական նշանակություն ունենալ, քանի որ հրավերով պահանջվող աշխատանքների իրականացման մեջ քարով իրականացվող աշխատանքները կազմում են ընդհանուր աշխատանքների 3%-ը:

3. ԳԲԽ-94/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-94/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտի դահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 01.07.2016թ. կազմակերպվել է «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ալֆա» ՍՊԸ-ն:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի (այսուհետև նաև՝ Հրավեր) ծավալաթերթ-նախահաշվի համաձայն Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտի դահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների կատարման նախահաշվային արժեքը կազմում է՝ 68,613,950:

3. «Ալֆա» ՍՊԸ-ն հայտի գնային Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնի առաջարկով նշել է, որ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից տրամադրված «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը ամսական /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտի դահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքներ	37936076	4172968	8421809	50530853 / հիսուն միլիոն հինգ հարյուր երեսուն հազար ութ հարյուր հիսուներեք/

4. ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 11.07.2016թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ալֆա» ՍՊԸ-ին:

5. Գնահատող հանձնաժողովը 19.07.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին և որոշել է ծանուցել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ալֆա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնային առաջարկի հիմնավորումներ և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6. Պատվիրատուն 19.07.2016թ. ժամը 5:15-ին «Ալֆա» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է, որ Ընկերությանը կողմից ներկայացված գնային առաջարկը գնահատվել է չհիմնավորված ցածր, և առաջարկել են 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և լրացուցիչ փաստաթղթային հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի մասով:

7. «Ալֆա» ՍՊԸ-ն 22.07.2016թ. գրությամբ Գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ Ընկերությունն ունի բոլոր հնարավորություններն իրականացնելու Հրավերով նախատեսված աշխատանքները, Ընկերությունն ունի քարերի մշակման արտադրամաս, սեփական տրանսպորտային միջոցներ, մեքենա-մեխանիզմներ և կից ներկայացրել է կատարվող շինարարական աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

8. Գնահատող հանձնաժողովը 26.07.2016թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Ալֆա» ՍՊԸ-ի հայտը՝ արձանագրելով, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հիմնավորումներն ընդունելի չեն:

4. ԳԲԽ-94/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ալֆա» ՍՊԸ-ի 26.08.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ քաղաքաշինության նախարարության գրավոր դիրքորոշումը և ներկայացված փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Ալֆա» ՍՊԸ-ի 26.08.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն (մինչև ՀՀ կառավարության 07.07.2016թ. N 700-Ն որոշմամբ Կարգում լրացումներ և փոփոխություններ կատարելը)՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ***ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընկերությունը հայտի գնային առաջարկում նշել է՝ **առաջարկված ընդհանուր գինը՝ 50,530,853**, ինչը ցածր է եղել Հրավերով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

«Ալֆա» ՍՊԸ-ն 22.07.2016թ. գրությամբ Գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ Ընկերությունն ունի բոլոր հնարավորություններն իրականացնելու Հրավերով նախատեսված աշխատանքները, Ընկերությունն ունի քարերի մշակման արտադրամաս, սեփական տրանսպորտային միջոցներ, մեքենա-մեխանիզմներ և կից ներկայացրել է կատարվող շինարարական աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը, սակայն Ընկերությունը նշված հաշվարկը հիմնավորող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել, ուստի ներկայացված հիմնավորումները ոչ բավարար լինելու պայմաններում գնահատող հանձնաժողովը, մասնակցի հայտը մերժելով, չի խախտել Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտի դահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Ալֆա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 26.07.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումը, «Արտֆլոր» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու պահանջի վերաբերյալ «Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին 26.08.2016թ. ներկայացրած բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-94/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան